վերայ այսր ամենայնի եհաս սուգ մեծ և տարաժամ տըխ-
րութիւն 'ի վերայ ազգին, զի անկաւ հրդեհ 'ի մայրա-
քաղաքի անդ եւ յամիսն դատեաց զբազմութիւն տունս
Հայոց՝ այրեցան նաեւ Մայր Եկեղեցին, Պատրիարքարանն
և Փոխանորդարանն Երուսաղէմի, որով անկան Պատրիար-
քունք և գլխաւորք ազգին 'ի տարակուսանս, որպէս պա-
տահեալ էր յաւուրս Գրիգորի Շղթայակրի և Յովհաննու
Կոլոտի, զի առաջի կայր նոցա հոգալ զբազմութիւն զաղ-
քատս ժողովրդեան, որք խսպառ մերկացեալ էին յամե-
նայն գոյից։

Կիրակոս Եպիսկոպոս գրեաց առ Փոխանորդ Զաքարիա
վարդապետ՝ հանել հրովարտակ արքունուստ վասն Առաջ-
նորդութեան Եգիպտոսի, ոչ վասն իւր, այլ վասն ապագայ
ժամանակին, զի արձանագրութիւն ինչ գտցի 'ի դիւանն,
զի ինքն հանգիստ էր շնորհիւ Փոխ Արքային Մէհէմմէտ
Ալէայ · թէպէտ նա ետ պատրաստել աղերսագիր 'ի Դուռն,
զորոյ զպատճէնն ընթերցեալ իսկ եմ, թէ մին 'ի վիճակաց Երուսաղէմի է Եգիպտոս, այլ յետոյ յո՞ր եղա-
նակ չրջեցաւ խնդիրն չէ յայտ։

Հուսկ ուրեմն ժամ պարապոյ դտեալ խորհրդով և կա-
մաք ազգին գրեցին Պատրիարքունք Գաբրիէլ, Կարապետ
և Պօղոս առ Խորհրդականս Աթոռոյն և առ նոյն ինքն Եղիա
եպիսկոպոս ('ի 11 Օգոստոսի) թէ դադարեալ է նա այ-
նուհետեւ 'ի պաշտօնէ իւրմէ · յանձնել զամենայն իրս փո-
խանորդութեան Խորհրդականաց, և գնալ յԵւդոկիա եւ
կամ 'ի Կեսարիա, և մնալ անդ · զայսոսիկ գրեանս բերեալ
մատուցին անձամբք Նախիպն և Դպրապետն, եւ ընթեր-
ցեալ Եղիայի եցոյց ուրախութիւն մեծ, եւ գոհութիւն
զազգէն, որ ազատեաց զինքն 'ի վշտաց, եւ յանձն էառ
գնալ 'ի սահմանեալ տեղիս, որպէս և ինքն յայտ առնէր
'ի գրի իւրում առ Ազգապետս · ապա յանձն արար զինիք
փոխանորդութեան և զբանալի փոխանորդարանին, և զա-
մենայն ինչ որ ընդ իշխանութեամբ նորա էր · բայց տաս-
մարք, հրովարտակք, մուրհակք և այլ սոցին նման իրք՝ էին
'ի խորհրդարանն (յ30 Հոկտեմբերի) · եւ ապա գրեաց 'ի
թղթի զել և զմուտ երից ամաց Աթոռոյն 'ի ժամանակս իշ-
խանութեան իւրոյ, և ետ կնքել զայն Խորհրդականաց և